

ՁՆԱԲՔԻ ԺԱՄԱՆԱԿ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԼԱՆ

1. Հնարավոր վտանգավոր տարածքների նկարագրություն

1) Ձմռան ընթացքում մարզի տարածքի առանձին շրջաններում հաճախ են դիտվում ձնահողմեր: Ձնահողմը կամ ձնաբուրքը երկրի մակերևույթի վրա ձնազանգվածի տեղափոխությունն է քամու կողմից: Ձնաբուրքի ուժգնությունը պայմանավորված է ոչ միայն ձյան տեղումների հաճախականությունից՝ այլև քամու արագությունից:

2) Մարզի տարածքում ձյան տեսքով տեղումներ լինում են ամեն տարի,

3) Մարզի տարածքի բարձր լեռնային գոտում՝ 1500 մ-ից բարձր, ամենավաղ ձնահողմերը նկատվում են արդեն հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, իսկ ցածրադիր գոտում ամբողջ ձմռան ընթացքում ձնահողմերը հազվադեպ են լինում: Բարձր լեռնալանջերին և սարավանդներին ստեղծվում են կայուն ձնածածկույթ, ձմեռը ցուրտ է և երկար: Հաճախ լինում են ուժեղ քամիներ, մառախուղներ, ձնաբքեր: Ձմեռը երկարատև է ու ձնառատ:

4) Մարզի տարածքում քամիների միջին տարեկան արագությունը տատանվում է 1,5մ/վ-ից մինչև 6,6մ/վ: Բարձր լեռնային շրջաններում և լեռնանցքներում քամու առավելագույն արագությունը դիտվում է ձմեռային ամիսներին, որը ձնահողմերի համար ստեղծում է լավագույն պայմաններ:

2. Եզրակացություններ

1) Մարզի նոսր բնակչություն ունեցող համայնքներում շարունակվող սաստիկ բքի և ուժեղ ցրտի պայմաններում հատկապես վարորդների և ուղևորների կյանքի համար խիստ վտանգավոր է բեռնատար մեքենաների կայանումը: Հատկապես գյուղական վայրերում ուժեղ բուրքը լրիվ ծածկում են ճանապարհները: Դրա համար շատ կարևոր է նախնական եղանակի կանխատեսումները, որպիսի բնակչությունը մինչև բքի դադարեցումը հնարավորություն ունենա նախօրոք մտածել հուսալի պաշտպանության մասին և սպասել բնակեցված վայրում:

2) Ձմռանը բնության տարերային աղետները արտահայտվում են ձյան առատ տեղումների և ձնաբուրքի հետևանքով ձյունահոսքերի ձևով: Ձյան տեղումները, որոնք կարող են տևել 16-ից 24 ժամ, խիստ ազդում են մարզի բնակչության տնտեսական գործունեության վրա, հատկապես գյուղական շրջաններում: Այդ երևույթի բացասական ազդեցությունը խորանում է ձնաբուրքի ժամանակ, որից կտրուկ վատանում է տեսանելիությունը, կտրվում է կապը և խափանվում են միջքաղաքային տրանսպորտային փոխադրամիջոցների աշխատանքները: Անձրևախառն ձյունը ցածր ջերմաստիճանի և փոթորիկի պայմաններում նպաստում է էլեկտրական գծերի, կապի, կոնտակտային ցանցերի, տանիքների, շինությունների, տարբեր տեսակի կոնստրուկցիաների սառցակալմանը, որն էլ պատճառ է հանդիսանում դրանց քանդմանը:

3) Ձյունը և բուրքը կարող են ավելի վտանգավոր դառնալ տրանսպորտի համար նաև այն դեպքում, երբ տաքացումից թաց ձյունը կամ անձրևը արագ սառչելու հետևանքով վեր են ածվում ձյան, որն էլ բերում է մերկասառույցի առաջացման: Այս պայմաններում ավտոճանապարհների և երկաթուղային ճանապարհների սառցակալումը ավելի է բարդացնում վիճակը, խախտում աշխատանքային ռիթմը:

4) Ուժեղ բքի ժամանակ հաճախ լինում է տեսանելիության վատացում՝ մինչև 100-50մ , երբեմն բերում է անտեսանելիության, որն էլ կարող է կաթվածահար անել տրանսպորտի աշխատանքը և առաջացնել վթարներ:

5) Բքի պատճառած վնասները կարող են լինել մի քանի տեսակ.

ա. ձյան լցում, որի արդյունքում դանդաղում է տրանսպորտի աշխատանքը (օդային, երկաթուղային, ավտոմոբիլային), նկատվում են ուղևորների և բեռների ուշացումներ, ավելանում են մաքրման աշխատանքների ծախսերը ,

բ. աշխատանքների դադարեցում (միջին չափի կորուստ),

գ. կառույցների փլուզում, էլեկտրական լարերի ու կապի խափանում, պտղատու ծառերի վնասներ ,

դ. ճանապարհա-տրանսպորտային և այլ պատահարներ՝ մարդկային կորուստներով :

3. Կանխարգելիչ միջոցառումներ

1) Առատ ձյան և բքի կանխատեսումների դեպքում անհրաժեշտ է կատարել հետևյալ կանխարգելիչ միջոցները՝

ա. աղ ցանել ճանապարհներին, դադարեցնել տրանսպորտի աշխատանքը, կազմակերպել մի շարք ծառայությունների ուժեղացված ծառայություն, այդ թվում նաև բժշկական,

բ. միջոցներ ձեռնարկել ձնահավաք մեքենաների անխափան աշխատանքը կազմակերպելու համար,

գ. նախատեսել մեքենաների և մեխանիզմների կոմպլեկտավորում իրենց անձնակազմով՝ ուժեղ ձնաբքի ժամանակ ձնհավաք մեքենայի աշխատանքները կազմակերպելու համար,

դ. կազմակերպությունների հետ՝ անկախ նրանց սեփականության ձևից կնքել համաձայնագիր՝ իրենց ամրացված տեղամասերում ձնամաքիչ մեքենաներ օգտագործելով տեղանքը ձյունից մաքրելու համար:

2) Որպես կանխարգելիչ միջոցառումներ անհրաժեշտ է նախօրոք կատարել.

ա. ուսումնասիրել և գնահատել մարզի ճանապարհների, կառույցների վիճակը՝ նրանց պատրաստվածությունը ձմեռվա պայմաններում շահագործելու նպատակով:

բ. նախապատրաստել համապատասխան տեխնիկա, շինարարական նյութեր, հակաձնահոդների պաշտպանական պատնեշներ՝ ճանապարհների, կառույցների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում պատնեշներ տեղադրելու նպատակով՝ դրան ներգրավելով նաև համայնքի բնակչությանը:

գ. նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքայուղային նյութերի պաշար՝ անհրաժեշտության դեպքում ձնաբքի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:

դ. նախապատրաստել միջոցներ անհրաժեշտության դեպքում տուժածներին առաջին բժշկական օգնություն ցույց տալու, կամ ստացիոնար բուժում կազմակերպելու նպատակով:

ե. պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:

զ. ճանապարհների առավել վտանգավոր տեղամասերում սահմանել պարետային ծառայություն, մշտական հսկողություն և հերթապահություն

4) ՃՇՇ-ների ղեկավարները պահեստավորում են աղի և ավազի խառնուրդ, մեքենաների և մեխանիզմների պահեստամասեր և այլ միջոցներ:

5) Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները ուժեղ ձյան դեպքում ճանապարհների և փողոցների մաքրման համար օգտագործում են կոլեկտիվ և ֆերմերային տնտեսություններում առկա հատուկ տեխնիկան, դրանց համար պահեստավորում վառելիքաքայու-քային միջոցներ:

6) ԿՄՓ վարչությունը արտակարգ իրավիճակների դեպքում իրավասու է տեղանքում օգտագործել կազմակերպություններին պատկանող ձնամաքիչ տեխնիկան:

4. Իրավիճակի կանխատեսում (վտանգավոր հատվածներում երթևեկության ժամանակավոր սահմանափակում)

1) Ձնաբուքը, որպես բնական երևույթ, բավականին մեծ ճշտությամբ կանխատեսվում է և սովորաբար ժամանակին տրվում է տեղեկատվություն հավանական վտանգավոր բնակավայրերին: Հատկապես կարևոր է բքի կանխատեսումը մի քանի ժամ առաջ, քանի որ նա բավականին ճշգրիտ է և թույլ է տալիս սկսել գործնական պրոֆիլակտիկ աշխատանքներ: Կարևոր են նաև մոտավոր կանխատեսումները ուժեղ բքի մեկ կամ մի քանի օր նրա սկսելուց առաջ, հատկապես գիշերային ժամերին, հանգստյան և տոնական օրերին:

2) Ձնաբքի վտանգի վերաբերյալ զգուշացումից հետո անհրաժեշտ է սահմանափակել շարժը, հատկապես գյուղական վայրերում, տանը պահեստավորել անհրաժեշտ քանակությամբ մթերք, ջուր և վառելիք: Առանձին շրջաններում ձմռան նախապատրաստական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է փողոցներում, տների արանքներում կապել ու ձգել պարաններ, որոնք ձնաբքի ժամանակ կօգնեն հետիոտներին կողմնորոշվել և հաղթահարել ուժեղ քամին: Գյուղական համայնքներում ահագանգը ստանալուց հետո պետք է կուտակել անհրաժեշտ քանակի կեր և ջուր ֆերմաներում գտնվող անասունների համար:

3) Հատկապես մեծ է վտանգը ձնահոսերից այն մարդկանց համար, ովքեր գտնվում են ճանապարհին, հեռու բնակեցված վայրերից: Ձյունածածկ ճանապարհները, տեսանելիության կորուստը բերում է տեղանքի ապակոմորոշման: Ձնաբքի ժամանակ թաքնվել շենքերում: Դաշտում կամ ճանապարհին հայտնվելու դեպքում, հարկավոր է դուրս գալ մայրուղի ճանապարհներ, որոնք սիստեմատիկ մաքրվում են և որտեղ օնություն ցույց տալու ավելի մեծ հնարավորություն կան:

4) Ավտոմեքենայով երթևեկելիս, պետք չէ փորձել հաղթահարել ձյունը, այլ անհրաժեշտ է կանգնել, ամբողջությամբ ծածկել շարժիչը ռադիատորի կողմից: Հնարավորության դեպքում մեքենան պետք է կանգնեցնել այնպես, որպեսզի շարժիչը գտնվի քամուն հակառակ ուղղությամբ: Ճանապարհին կանգնելու դեպքում ազդանշան տալ ընդհատումներով, բարձրացրել շարժիչի ծածկոցը, կամ կախել վառ գույնի կտոր ալեհավաքի վրա, սպասել օգնության մեքենայի մեջ: Պարբերաբար անհրաժեշտ է դուրս գալ մեքենայից, մաքրել ձյունը՝ ձնածածկումից խուսափելու նպատակով: Բացի դրանից, ձյունով չծածկված մեքենան որոնողական խմբի համար լավ կողմնորոշիչ է:

5) Սառչելուց խուսափելու համար մեքենայի շարժիչը անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ տաքացնել: Գազից չթունավորվելու համար տաքացման ընթացքում հարկավոր է ուշադիր լինել, որ այրված գազը չլցվի մեքենայի խցիկ: Դրա համար անհրաժեշտ է հետևել որպիսի արտաժայթքման խողովակը չլցվի ձյունով, անհրաժեշտ է նաև բաց թողնելով պատուհանը: Եթե ճանապարհին կարող են լինել մի քանի մարդ՝ մի քանի մեքենաներով, ավելի նպատակահարմար է, որպիսի բոլորը միասին հավաքվեն մեկ մեքենայի մեջ և այն օգտագործեն որպես ծածկ, իսկ մնացած մեքենաներից անհրաժեշտ է թափել շարժիչի ջուրը: Մեքենայից դուրս գալիս շատ չհեռանալ նրանից, որովհետև ուժեղ ձյան ժամանակ առաջին հայացքից թվում է թե հեշտ է կողմնորոշվել, բայց մի քանի մետր հեռանալուց հետո կարող են մոլորվել: :

6) Մոլորվելու դեպքում, անհրաժեշտ է մտնել հենց առաջին հանդիպած տունը, ճշտել գտնվելու վայրը և հնարավորության դեպքում սպասել մինչև բուքը վերջանա: Եթե լքել են ուժերը, փնտրել և մտնել ծածկի տակ և մնալ այնտեղ: Ձնաբքի ժամանակ թաքնվել շենքերում: Անհրաժեշտ է ուշադիր և զգուշ լինել անձանոթ մարդկանց հետ շփվելիս, քանի որ տարերային աղետների ժամանակ մեծանում է գողությունների թիվը բնակարաններից, ավտոմեքենաներից, հիմնարկներից:

7) Սառցակալման հետ աղետի չափերը մեծանում են: Ճանապարհների սառցակալումը դժվարացնում է կատարվող աշխատանքները, հաճախ նաև լրիվ դադարեցնում ավտոմոբիլային տրանսպորտի աշխատանքները: Հետիոտների շարժը դժվարանում է, իսկ ձյան տակ գտնվող տարբեր կոնստրուկցիաների և առարկաների քանդվելը իրենցից մեծ վտանգ են ներկայացնում: Այդ պայմաններում հարկավոր է խուսափել խալիլված շինությունների, էլեկտրական և կապի գծերի, նրանց հենասյուների, ծառների տակ գտնվելուց:

5. Պատրաստականության բերում (փոխգործողություն)

1) Անմիջական վտանգի դեպքում կազմակերպվում է բնակչության իրազեկում և պատրաստի վիճակի են բերվում կազմակերպությունների և ծառայությունների ուժերը, հասարակական փրկարարական ջոկատի կամավորները, վթարավերականգնողական և մեխանիզացված խմբերն ու միջոցները համաձայն նախապես մշակված պլանների:

2) Ուժեղ ձնաբքից հետո լեռնային շրջաններում մեծանում է ձնահոսքի առաջացման վտանգը: Այդ վտանգի մասին հանրությանը տեղեկացվում է տարբեր նախագոյաշական ազդանշաններով, որոնք տեղադրվում են ձնահոսքի հնարավոր վայրերում: Չի կարելի անուշադրության մատնել այդ գոյաշականները, այլ անհրաժեշտ է խստիվ կատարել տրված հրահանգները:

3) Փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում փոխգործողությունները կազմակերպվում են արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման ուժերի նպատակաուղղված օգտագործման և այդ ուժերի միջև գործողությունների հստակեցման նպատակով: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ըստ տեղանքի և ժամանակի, փոխգործողությունների հիմքն են հանդիսանում համապատասխան պլանները:

4) Փոխգործողությունը կազմակերպվում է առաջին հերթին հիմնական խնդիրները (փրկարարական և արտակարգ իրավիճակի տեղայնացման աշխատանքներ) իրագործող կազմավորումների շահերից ելնելով: Փոխգործողություններ կազմակերպելիս համաձայնեցվում է՝

- ա. տարածք (օբյեկտ) մուտք գործելու ժամանակ գործողությունների կարգը,
- բ. փրկարարական աշխատանքների իրականացմանը խանգարող հանգամանքների, խոչընդոտների վերացման կարգը,
- գ. տեղեկատվության փոխանակումը միմյանց միջև,
- դ. իրադրության բարդ պայմաններում փրկարարների գործելու կարգը,
- ե. կոմունալ-էներգետիկ համակարգի վթարների վերացման ժամանակ փրկարարների և տեղական կազմավորումների մասնագետների հետ փոխգործողության կարգը,
- զ. հերթափոխի ժամանակ գործողությունների կարգը,
- է. իրավիճակի կտրուկ փոփոխության, փրկարարի կյանքին անմիջական վտանգի դեպքում գործողության կարգը,
- ը. կապի և տեղեկատվության կարգը,
- թ. կառավարման կետերի տեղակայման վայրերը:

5) Ելնելով ստեղծված իրավիճակից առավել վնասված կազմակերպություններում փոխգործողության կարգով կարող են միմյանց տրամադրել փրկարարական և այլ կազմավորումներ՝ ուժեր ու միջոցներ:

6) Ինչպես ձնաբուքին և ձնահոսքին նախապատրաստվել.

- ա. եթե ստացվել է նախագոյաշակում ուժեղ ձնաբքի վերաբերյալ, անհրաժեշտ է ամուր փակել պատուհանները, դռները, տանիքների լուկերը և օդափոխիչ սարքերը,
- բ. պատուհանների ապակիները թղթե ժապավեններով կպցնել,
- գ. պատրաստել երկու օրվա ջրի, մթերքի պաշար, ունենալ դեղամիջոցներ, ավտոմատ լուսավորման հարմարանքներ(ֆոնարիկներ, կերոսինի լամպեր, մոմեր), ռադիո էլեմենտներով,
- դ. պատշգամբներից և պատուհանների գոգերից վերցնել առարկաներն ու իրերը, որոնք կարող են քշվել օդի ուժեղ հոսքից,
- ե. միացրած թողնել հեռուստացույցն ու ռադիոն վերջին լուրերը լսելու համար,
- զ. նախապատրաստվել էներգիայի հնարավոր անջատումներին,
- է. տեղափոխվել թեթև կառույցներից ավելի ամուր շենքեր,
- ը. պատրաստել գործիքներ ձյունը մաքրելու համար:

7) Ինչպես գործել ուժեղ ձնաբքի ժամանակ.

- ա. միայն խիստ անհրաժեշտության դեպքում դուրս գալ տանից,
- բ. արգելվում է մենակ դուրս գալ տանից,
- գ. դուրս գալիս տան անդամներին կամ հարևաններին տեղեկացնել, թե ուր եք գնում և երբ կվերադառնաք,

դ. մեքենայով կարելի է շարժվել միայն մեծ ճանապարհներով, պողոտաներով:

8) Ինչպես գործել ուժեղ բքից հետո.

ա. եթե ուժեղ ձնաբքի հետևանքով շենքերում փակված մնացել են մարդիկ, զգույշ, առանց խուճապի անհրաժեշտ է պարզել, թե արդյոք չկա հնարավորություն ինքնուրույն դուրս գալ ձյան տակից՝ օգտագործելով ձեռքի տակ եղած միջոցներն ու գործիքները,

բ. տեղեկացրել ԱԻ վարչություն ստեղծված իրավիճակի մասին: Եթե ինքնուրույն հնարավոր չէ դուրս գալ իրավիճակից, անհրաժեշտ է կապ հաստատել փրկարարական կազմավորումների հետ,

գ. միացնել ռադիոն կամ հեռուստացույցը և կատարել տեղական ինքնակառավարման մարմինների հրահանգները,

դ. միջոցներ ձեռնարկել տան ջերմաստիճանի պահպանման համար և խնայողաբար ծախսել մթերքը,

ե. բքից հետո մասնակցել ճանապարհների և փողոցների մաքրման աշխատանքներին, ուշադիր հետևելով նախազգուշական նշաններին, որոնք գտնվում են հնարավոր ձնահոսքի տեղում:

9) 1-ին օգնությունը ցրտահարվելու դեպքում.

ա. տաք սենյակում տաքացնել մարմնի ցրտահարված մասը, տրորելով չոր, փափուկ կտորով, այնուհետև նրան տեղափոխել տաք ջրի մեջ և աստիճանաբար ջրի ջերմաստիճանը հասցնել 40-45 աստիճանի:

բ. եթե ցավը անցնում է և զգայունությունը վերականգնվում է, չորացնել ձեռքը կամ ոտքը, հազգրնել գուլպաներ, ձեռնոցներ և հնարավորության դեպքում դիմել բժշկի:

6. Բնակչության իրազեկում

1) Ձնաբքերը որպես կանոն բավականին հուսալի և ժամանակին են կանխատեսվում: Ստանալով նախազգուշացում փոթորիկի և ձնաբքի մասին անհրաժեշտ է.

ա. պահեստավորել ջրի, մթերքի, վառելիքի պաշար,

բ. հեռուստացույցը, ռադիոն թողնել միացված,

գ. պատրաստ վիճակում պահել լուսավորող սարքերը, մոմերը, լամպերը,

դ. ապահովել կենդանիներին կերով և ջրով,

ե. տաքացնել շինությունները:

2) Տարերային աղետների ժամանակ բնակչության ճիշտ գործողությունները՝ հիմնված բնակչության պաշտպանության վերաբերյալ գիտելիքների վրա, նվազեցնում է մարդկային և նյութական արժեքների կորուստը:

3) Ջերմաստիճանի կտրուկ տատանումներից հնարավոր են ձևի հոսք տանիքներից և սառցակտորների ընկնելու վտանգ: Ուստի շինությունների կողքով անցնելիս հարկավոր է հեռու մնալ պատշգամներից և պատուհանների ծածկերից: Ընտրել ապահով ուղիները, շրջանցել այն տեղամասերը, որտեղ կախված են սառույցներ և կան ձյան կուտակումներ: Չի կարելի մոտենալ այն հատվածներին, որտեղ կատարվում են ձյան մաքրման աշխատանքներ: Հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել երեխաներին, նրանց սովորեցնել քայլելիս նայել նաև վերև: Ընտրել երեխաների համար անվտանգ ճանապարհներ, քայլել երեխայի հետ միասին:

4) Մայրով անցնելիս լսելով կասկածելի աղմուկ, չի կարելի կանգնել, բարձրացնել գլուխը և վերև նայելով փորձել տեսնել, թե ինչ է կատարվում: Հնարավոր է, որ ձյան կամ սառցակտորի հոսք լինի: Փախչել տների մոտից նույնպես չի կարելի: Անհրաժեշտ է արագ սեղմվել պատին, քանի որ տանիքի ծածկերը նույնպես կարող են ծառայել որպես թաքստոց:

5) Եթե մարդը հետիոտն տեղաշարժվելուց անբնակ վայրում ապակողմորոշվել է, ապա՝
- անհրաժեշտ է մտնել առաջին հանդիպած տուն, ճշտել գտնվելու տեղը և սպասել ձնաբքի ավարտին:

- եթե ուժասպառվում եք, անհրաժեշտ է փնտրել ծածկ և մնալ այնտեղ:

6) Եթե ուժեղ ձնաբքի պայմաններում մնացել եք փակված տանը, ապա՝

ա. առանց խուճապի. զգույշ, հարկավոր է պարզել հնարավոր է դուրս գալ ձյան ծածկույթի

տակից ինքնուրույն, ապա օգտագործել ձեռքի տակ ունեցած գործիքները.

բ. տեղեկացնել մարզային փրկարարական վարչությանը կամ տեղական ինքնակառավարման մարիններին ձևաձևակառավարման փուլի և ինքնուրույն դուրս գալու հնարավորության մասին: Եթե ինքնուրույն հնարավոր չի մաքրել ձյան նստվածքը, անհրաժեշտ է կապ ստեղծել փրկարարական ստորաբաժանումների հետ.

գ. միացնել ռադիոընդունիչը և կատարել տեղական ինքնակառավարման մարմինների ցուցումները: Անհրաժեշտ է ձեռք առնել միջոցներ ջերմության պահպանման և սննդամթերքի խնայողաբար օգտագործմանը:

7. Բնակչության պաշտպանության միջոցառումներ:

1) Ձևաքթի, ձևահոսքի, փոթորիկի ժամանակ կատարվող հիմնական աշխատանքները.

ա. կորած մարդկանց փնտրում և անհրաժեշտության դեպքում 1-ին օգնության ցուցաբերում,

բ. ճանապարհների մաքրում,

գ. ճանապարհին մնացած վարորդներին օգնության ցուցաբերում,

դ. վթարների վերացում տնտեսական-էներգետիկ համակարգում:

2) Մարզի ձևամաքման աշխատանքները առաջին հերթին կատարվում են կարևոր նշանակության մայրուղիներում, վերականգնվում են կենսաապահովման օբյեկտների (գազամատակարարում, ջրամատակարարում, էլեկտրաէներգիա) աշխատանքները: Ձյունը ճանապարհներից հեռացվում է քամուց պաշտպանված հակառակ կողմից: Հեռացնելու համար օգտագործվում է ինժեներական տեխնիկա և ձևամաքիչ մեքենաներ: Այդ աշխատանքների կատարման համար ներգրավվում են մարզի առկա տեխնիկական, տրանսպորտային միջոցները և բնակչությունը:

3) Կազմավորումների կողմից կատարվող աշխատանքների առանձնահատկությունը այն է, որ այդ աշխատանքները կատարվում է ջերմաստիճանի և տեսանելիության շատ ցածր պայմաններում: Այդ պատճառով առաջնահերթ խնդիր է համարվում մի շարք օբյեկտների վերականգնումը (ջուր, գազ, ջրամատակարարում):

4) Անհրաժեշտության դեպքում կազմավորվում են սննդի, ջրամատակարարման, տաքացման կետեր, տարվում են աշխատանքներ մարդկանց և կենդանիներին փրկելու, ինչպես նաև կոմունալ համակարգերում տեղի ունեցած վթարի հետևանքների վերացման համար: Ջեռուցման կետերը կազմավորվում են այն վայրերում, որտեղ կազմավորումները տեղակայված են և կատարվում են աշխատանքներ: Կետերում ջրամատակարարում կազմակերպելու համար օգտագործում են մոտ գտնվող ջրաղբյուրները, իսկ եթե դրանք չկան՝ օգտագործվում է ձյունը, կամ խմբերում ստեղծում են սառույցի պաշարներ:

5) Կորած մարդկանց փնտրելու ձևերը՝

ա. Որոնումներ տեղանքի «սանրում» մեթոդով.

Որպես օրենք այս մեթոդը կիրառվում է բնական միջավայրում, երբ տուժածները չեն կարողանում ինքնուրույն տեղաշարժվել, ձայնային կամ այլ ազդանշաններ արձակել: Այս որոնման եղանակը հիմնված է ուսումնասիրվող տեղանքում ոտքով տեղաշարժվելու և տեսողական զննման վրա: Առանձին դեպքերում «սանրումը» իրականացվում է կենդանիների և տեխնիկայի օգնությամբ: Որոնման տարածքը նախօրոք բաժանվում է քառակուսիների, որից հետո յուրաքանչյուրում կատարվում է տարածքի «սանրում»: Որոնման աշխատանքների դադարի որոշումն կարող է ընդունել միայն աշխատանքների ղեկավարը: Որոնման աշխատանքների ժամանակ փրկարարները պետք է ունենան տարածքի քարտեզներ, կողմնացույցներ, առաջին օգնության պարագաներ, սնունդ: Որոնման ժամանակ մասնակիցները պետք է պահպանեն անվտանգության կանոնները, իսկ հագուստն ու կոշիկները պետք է համապատասխանեն աշխատանքի և եղանակային պայմաններին:

բ. Որոնումներ հետքերով.

Բնական միջավայրի պայմաններում որոնման արդյունավետ ձևերից է որոնումը՝ ձյան, խոտի, ցեխի, սառույցի, փոշու, ավազի վրա թողած հետքերով: Հետքերով կարելի է որոշել տուժածների տեղաշարժվելու ուղղությունը, վիճակը, խմբի քանակը, տեխնիկայի, կենդանիների, հանդերձանքի, սնունդի, դեղորայքի առկայությունը, ուսումնասիրվող տարածքում տուժածների գտնվելու

Ժամանակահատվածը: Այն դեպքերում, երբ հետքը չի կտրվում և լավ տեսանելի է, տուժածների որոնումը շարունակվում է մինչև նրանց հայտնաբերումը: Հետքերով որոնումը իրականացվում է ոտքով, տեխնիկայի և կենդանիների օգնությամբ, փրկարարների 5-6 հոգանոց խմբով: Հետքերով որոնումը կարող է շարունակվել մի քանի օր: ՌԻստի՝ հաշվի առնելով տուժածների կարիքները, փրկարարները պետք է ունենան սննդի, դեղորայքի, հանդերձանքի, կապի միջոցների որոշակի պաշար: Այդպիսի որոնման ժամանակ չի կարելի հետքերը տրորել/կոխտուել/, ճանապարհին հանդիպող բոլոր առարկաները պետք է հավաքել: Աշխատանքների արդյունքները գրանցվում են երթուղային մատյանում և նշվում են քարտեզների վրա:

գ. Չոնդավորում.

Չյան վրա, ջրում, մութ խոռոչներում որոնումները կատարվում են զոնդավորման միջոցով, որի ժամանակ կիրառվում է հատուկ հարմարանք՝ զոնդ: Չոնդն իրենից ներկայացնում է 3-4 մետրանոց երկաթյա ձող, հատուկ հարմարեցված ծայրով, որը հնարավորություն է տալիս ստանալ տեղեկություն այն առարկաների վերաբերյալ որոնց այն շոշափում է: Չոնդավորման ընթացքում անհրաժեշտ է պահպանել լրություն, որպեսզի լսելի լինի զոնդի խոչնդոտին դիպչելու ձայնը, ինչը թույլ է տալիս որոշել խոչնդոտի բնույթը:

դ. Որոնումներ ականատեսների վկայություններով.

Տուժածների որոնման արդյունավետ եղանակներից մեկը ականատեսների հարցումն է, որի ընթացքում որոշվում է տուժածների գտնվելու վայրը, քանակը, ընդհանուր վիճակը, սննդի և կենսապահովման միջոցների առկայությունը, տեղաշարժի ուղիները, վտանգների առկայությունը: Հարցումը կատարվում է զրույցի միջոցով, որի արդյունքները պետք է հիշվեն կամ գրանցվեն մատյանում: Հարցման ժամանակ պատմողին չեն ընդատում և տալիս են ճշգրտող հարցեր: Որպես հարցվողներ հանդիսանում են մարդիկ, որոնք տեսել են տուժածներին, եղել են ԱԻ ականատես, փրկվածներ են, որոնողափրկարարական աշխատանքների մասնակիցներ են: Անհատական կամ խմբակային հարցման վայրը ընտրվում է՝ ելնելով պայմաններից: Ականատեսների հետ զրույցների հարցերն ու թեմաներն են՝

- ԱԻ տեղը, ժամը, մասշտաբը,
- թունավոր նյութերի, հրդեհների, պայթյունավտանգ առարկաների առկայությունը,
- ԱԻ գոտի տանող ուղիների խոչնդոտները,
- տուժածների հետ վերջին հանդիպման վայրը և ժամը,
- տուժածների տեղաշարժի ուղղությունը,
- տուժածների վնասվածքների և տրավմաների բնույթը:

6) Ձևաբքի սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումներն են.

ա. ահազանգի ստացում ձևաբքի մասին,

բ. ԱԻՄԳՀ-ի անդամների ազդարարում և հավաք,

գ. իրազեկում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին և հերթապահ ծառայություններին՝ սպասվող առատ տեղումների, քամու ուժգնացան, լեռներում և լեռնանցքներում բուքի վերաբերյալ՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար,

դ. տեղեկատվություն բնակչությանը՝ ստեղծված իրավիճակի, վտանգի, վթարների վերացման ժամկետների և անվտանգության կանոնների պահպանման, վարքականոնների գործողությունների վերաբերյալ,

ե. մարզի ԱԻՄԳՀ-ի օպերատիվ խմբերի, վթարային խմբերն ու կազմավորումների պատրաստակաության բերում,

զ. հետախուզության կազմակերպում, տուժած տարածքի, տեղանքի և հետևանքների ուսումնասիրում,

է. իրավիճակի գնահատում, ձևաբքի հետևանքների վերացման եղանակի որոշման ընդունում, խնդրադրում՝ բնակչության պաշտպանության և ՓԱՎՎԱ-ի իրականացման և կատարման վերաբերյալ,

ը. որոշում ուժեղ ձևաբքի և ձևահողմերի պայմաններում արտադրական գործնության առաջնահերթ միջոցառումների ապահովման ձևերն ու մեթոդները,

թ. ճշտագրտում ներգրավվող ուժերի և հատուկ միջոցների հաշվարկները ճանապարհների, անցումների մաքրման, կոմունալ ցանցերի վերանորոգման և վերականգնման նպատակով,

ժ. ուժերի և միջոցների տեղաշարժ ՓԱՎԱ-ի կատարման վայր, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ուժերի և միջոցների ներգրավում այլ մարզերից,

ժա. օպերատիվ խմբի մեկնում դեպքի վայր՝ ձևաբքից վթարների վերացման աշխատանքների ղեկավարման համար,

ժբ. մարզի ԱԻՄԳՀ-ի նախագահի հրամանների և կարգադրությունների տեղ հասցնում համապատասխան ներգրավված աշխատանքային խմբերին՝ արդյունաբերության գործունեության ապահովման, ջրագծերի սառեցման կանխատեսումների վերաբերյալ,

ժգ. ԱԻՄԳՀ-ի աշխատանքներ իրավիճակի ճշտման, աղետի հետևանքները մեղմացնելու, վերացման նախնական աշխատանքների խնդարման, ստորաբաժանումների խնդիրների ճշգրտման, անընդմեջ աշխատանքների ղեկավարման նպատակով,

ժդ. ճշտումներ փոխգործողությունների կազմակերպման և իրականացման կարգը ըստ վայրի և ժամանակի ներգրավված ծառայությունների և նրանց հերթապահների միջև,

ժե. հերթապահությունների աշխատաքային ռեժիմի ուժեղացում,

ժզ. որոնողափրկարարական աշխատանքների կատարում՝

- ձևաբքի վայրերում մարդկանց հայտնաբերում,
- խցանված մեքենաների բնակչության տարահանում անվտանգ վայրեր,
- բժշկական և այլ օգնության ցուցաբերում,
- գյուղատնտեսական կենդանիների հայտնաբերում և փրկում,

ժէ. վթարի հետևանքների վերացման աշխատանքների իրականացում,

ժը. անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և կատարում ուղղված հետևանքների նվազեցման՝

- ճանապարհների, անցումների և հրապարակների մաքրում,
- լրացուցիչ մեքենաների նախապատրաստում,
- ջերմության և էլ.էներգիայի խնայողության միջոցառումների կատարում,
- հիդրոտեխնիկական կառույցների ամրացում,
- խոշոր խողովակաշարերի վթարների դեպքում առաջնահերթ դադարեցնել,
- խողովակաշարի սպասարկումը՝ հնարավոր վտանգներից խուսափելու համար,
- երթուղիներում կամուրջների և ճանապարհների վերականգնում,

ժթ. դրված խնդիրների կատարման հսկողություն,

ի. գեկուցագրերի ներկայացում ձևաբքի հետևանքների վերացման, լրացուցիչ ձեռք առած միջոցառումների, առաջնահերթ վերականգնողական աշխատանքների և ավարտի վերաբերյալ:

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՄՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Փ/Օ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ